



ՏՆՕՐԷՆ ԽՄՐԱԳԻՐ
 և ի
ՊԱՏՄԱՆԱՆՍՈՒ
 Նկ. Մ. ԹԻՒՂԵՆՏՅԱՆ
 ԽՄՐԱԳՐԱՏՈՒՆ
 Ղալաթիա Բերլինից Բազաթ
 Խոթ Խոտի գէմը Սամսուր փո-
 Ղոց Թիւ 13

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՄԱՅԻՍ ԵՐՐԹ, 20 ՓՐ. ՄԷՐ Ա. Ի. Բ.

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռեդաքցիոն

Կ. Պօլսոյ	Համար
Տարեկան	դր. 100
Վեցամսեայ	» 50
Եռամսեայ	» 25

Դուրառաց Համար

Տարեկան	դր. 150
Վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40

Օտար երկիր տրկն. 40 Ֆր.ք.

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Հակառակ մեր ազգային անեցած համոզման որ գոյացած է Ազգ. Սահմանադրութեան հաստատուելովն, և որ կազմուած է սա՛ միակ կարծեօք թէ Ազգը ազատած է իսպառ ամբարայից տիրապետութենէն, մենք կարող եմք պնդել թէ երբեք մեր վրոյ ծանրացող իշխանութեան լոկ անուներ փոխուած է, և չվարանիմք բռն թէ մեր վարչական արդի դրութիւնը աւելի յոռեղոյն դարձած է քան որչափ չէր ամբարայիցն: Ազգ. ժողովը յորմէ կ'ծնին ամեն իշխանութիւն և զօրութիւն: վարչական այլևայլ ժողովոց արարք և գործողութիւնքն քննելու, վաւերացնելու ու մերժելու կարողութիւն ունեցող այս Արիւսպագոսը, Ամբարաներու կամ լուս և ս Միւթեպէլիներու ժողովի մը զիրքքն ու վիճակն առած է այսօր Անձնիք երեսփոխան որ հոն կ'բազմի, ընտրելու ու ներկայացուցիչ դաւառի մը, չունի պահանջուած հանգամանքն ազատութեն վիճելու, այլ պարտաւոր է կամ ժողովը վարող կրից ոգւոյն ու հասանքին հպատակել և կամ չեզոք դիրք մը առնուլ: Վերջապէս մարդ կ'կարծէ տեսնել հոն բազմութիւն մը մարդկանց՝ որք կ'շարժին իրրև մեքենայ այն հզոր ձեռաց մէջ՝ որ ըստ կամս կը գործածէ զնոսս:

Հարկ է իր նիտտերուն ներկայ գտնուիլ, այդ ժողովի վերայ լաւ գաղափար մը ստանալու համար, խորհրդարան մի կոչէք զայն, այլ ժողովուրդն ըստ քմաց գործածելու նպատակաւ կազմուած ընկերութիւն մը, անխռածանի, մշտապէս ընկերութիւն մը որ ոչ թէ կ'ընտրուի ի մէջ, այլ կ'ընտրէ իր

անգամքն ուրկէ որ ուզէ, հազիւ ուրեմն աննշան փոփոխութիւն մը կ'ունենայ, և այն անձերու և անուանց մասին, ոգին, կրից ոգին միշտ կ'ախրէ անդ, նոյն ձեռքը կ'վարէ այդ միութիւնը, խեղճ ազգ, հէք ժողովուրդ, առ ոչինչ կ'սեպենքու կամքք. քուէիցդ կ'գիմեն այն ատեն՝ երբ պակաս թիւ մը կալ իրանայ, բայց ի քէն ինդրածնին չէ աղատ և անկախ միտք մը, այլ զոր գլուխ մը ըստ հարկին խոնարհելու, և տկար ձեռք մը տրուած նշանին բարձրանալու, ի զուր դու կ'սպասես լրումն օրինաւոր բարձանացդ, անոնք քի իդ կ'խընդան և իրենց խաղը կ'շարունակեն:

Ինչպէս կը հանդուրժեմք այսքան անիրաւութեանց, չեմք կարող սահման մը դնել այս անսահման Տիկղատորութեան, թողումք որ ընդդէմ մեր կամաց շարունակեն զմեզ վարել: Մէկը՝ օրինաց հաստատուելէն ի վեր ի գործ գրուած զեղծմունքն մինչ ցայսօր, դեռ մտտերս երկու մեծ զեղծում կայ գործուած: Ա.ք Ազգային խնդրոյ մը նկատմամբ իրաւացի թէ պէտ խիստ զիտողութիւններ ու քննադատութիւն ընող երեսփոխանի մը դէմ: Բ.ք օրինաց ամեն արամադրութեամբք մեծ դաւառէ մ'ընտրուած երեսփոխանի մը դէմ: Ատենա կան օրինադաւնցութեան սոյն 2 միջադէպերը, Պ. Պ. Բոլ տը ֆասանեաքի և Պլանքիի դէպքերը կ'ընկնեն, երկու ֆրանսացի երեսփոխանք, որ մեր 2 հայ երեսփոխանաց վիճակին հետ զուգարկուել թիւն մը կուսենան: Ա.ք Պ.Պէկեանի պէս արատաքման (բայց երեքօրեայ) և ոչ թէ մշտնջենական) և սարսաւանաց քուէ բնուանելով ժողովն, Բ.ք Պ. Թիւլպէնտեանի

նման մերժուելով վաւերացուի: ԼԷ. Բայց ինչ մեծ տարբերութիւն իրաւանց, Հեւի ի մէջ մտածելը թէ մեր Ազգ. ժողովն ալ ֆասանեաքի պէս իւր իրաւանցը մէջ էր: Ամեն ոք գիտէ տը ֆասանեաքի գործածած թշնամական լեզու, երեսփոխանական ժողովոյ մէջ, հաստատուած կառավարութեան մը դէմ, զոր անսամթ անուանեց. ամեն ոք կ'ճանչնայ զՊլանքի յեղափոխական անձը, քանիցս բանտարկուած իւր անվարտիական գործերովն իսկ Պ. Պէկեան և Թիւլպէնտեան նոյն կացութեան մէջ չեն սակայն, մին քննադատի դեր կատարելովը, և միւսն ալ պատուաւոր քաղաքացիի մը համբաւ ունեցած բլլալով:

Կը խնդրեմք անձկանօք որ տեսան մը ցոյց տան մեր բռնապետական ժողովոյ արարքը դատելու, չեմք ճանչնար այդպիսի մտքմին մը, բաց ի գործադիր իշխանութեան նախագահէն, որոյ հիւանդութեանք պատճառաւ բացակայութենէն ստիժ և օգուտ կ'քաղէ զինքը հոյ ներկայացնող փոխանորդ սրբազանը, ամեն ապօրինաւորութիւն լռելեայն չտեսնելու զարնելով, և չկայ ձեռք մը որ Պ. Փափաղեանի նման վարժապետի մը ձեռք կառավարեալ ըլլալու արարք-սրբէ մեր ճակատէն Արգէն հպատակ այլարհակալութեան օրինօք, ուրիշ հպատակութիւն մ'այ ստեղծեցինք Սահմանադրութեան օրէնքով:

Սըր՝ Մարտիան
 . . . խորհրդ
 Թառաջիկայ կիրակէ (յնս. 17) Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ և կեղեցւոյ տօնախմբութիւնն ըլլալով, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը Ս. Պատարագ պիտի մատուցանէ:

Չայս ի գիտութեան բարեպաշտ ժողովրդեան հրատարակելիդ կ'խնդրեմք:
 Թիւմաք ի զիմաց թաղ խորհրդոյ
 Ատենադպիր Ատենապետ
 Պ. Խորանեան Հիւ. Սարգիսեան
 79 յունիս 14
 Թաղ. Խորհրդարան
 Ղալաթիոյ

ՕՍԵՏԱՐԱՐԻԹԻՒՆ

Կիլիկիան Ընկ.
 Թայսէ թէ Հոգեւոյս Կառապետ վարդապետ Շահնազարեանի կտակն (կ'պահանջէր որ կիլիկիոյ մէջ բացուէր այն դպրոցը որ խոսողիւզի մէջ հիմնուեցաւ Նուպար Շահնազարեան անուամբ: Եթէ զանազան պարագայներ չեն ներած յայնժամ հայրենասէր վարդապետին փափաքն իրագործել, իւր սաները մտածեցին թէ իրենք պարտաւոր են գործադրել իրենց բարերարին յետին կամքը: Աւստի, 1871 սեպտեմբեր 1ին, խոսողիւզի կրթարանին մէջ հիմնեցին վարդապետեան ընկերութիւնը, որոյ նպատակն էր մի վարժարան բանալ կիլիկիոյ Հաճըն քաղաքին մէջ: Վարժարանը բացուեցաւ արդարև, և կ'շարունակուի ցարդ անխաբան, Հաճընի սգգայնոց համար լուսաւորութեան կեդրոն մը հանդիսանալով:

Սակայն Շահնազարեանի սաներէն ոմանք, նկատելով որ վարդապետեան ընկերութեան շրջանակն ընդլայնելու ժամանակը հասած էր, ներկայացան բարձրաշնորհ Ս. Պատրիարք հօր, և խնդրեցին որ հաճի իւր բարձր հովանաւորութեան ներքե առնուլ այն ուսանողաց միութիւնը որք իւր վերատեսչութեան տակ դաստիարակուած էին խոսողիւզի մէջ, նորէն Սրբաշնութիւնն, յօժարա-

վոյթ ընդունելով աղաչանքը, իւր յատուկ հրատարակումով ի ժողով գումարեց բոլոր նույնպէս Շահնազարեան ուսանողներն, որք 1879 փետր. 18ին, վար. զանեան ընկերութիւնը վերա- կազմելով, կիլիկիան ընկերու- թիւն անուանեցին զայն, նպա- տակ ունենալով ազգ. դաստիա- բակութիւնն ընդհանրացունել ամբողջ կիլիկիոյ մէջ:

Կիլիկիան ընկերութիւնը իւր կազմութիւնը լրացուցած բլա- լով այսօր, կ'իյնայ սոյն յայ- տարարութեամբ ներկայանալ Ազգին, հարկաւոր տեղեկու- թիւններն հայթայթելով նմա. (*)

Կիլիկիան ընկերութիւնն ու- նի այսօր վարժարան մը Հաճը- նի մէջ, 60 աշակերտով և Շահ- նազարեան ուսումնարանի աշա- կերտ Պ. Մելքոն Մանուկեանի տեսչութեան տակ, և կ'պատ- րաստուի նոր դպրոցներ բա- նալ Զէյթունի և ուրիշ կիլիկ- եան քաղաքացի մէջ: Նա աւե- լորդ կ'համարի բացառել աղ- զին թէ ս'ըքան ստիպողական է կրթութիւն տարածել մեր սիրելի կիլիկիացի եղբարց մէջ, և տարակոյս չունի թէ այն հայ- բնասէրք, որք Արարատեան և Արեւելեան-Դպրոցատիրաց ըն- կերութեանց նպատամատոյց կ'հանդիսանան, իրենց լուսման չպիտի զլանան նաև կիլիկեան ընկերութեան:

Ստանպոլ. Ատնդար.
Մ. Զեբուզ կ. Կարեօն

Ունիոյ մէջ կայս. ֆինչաց արարքներուն վրայօք վերջին լուրերն հետեւեալ տեղեկու- թիւնները կ'հաղորդեն:

Ունիոյ մէջ կառավարական ժողովներն վերակազմուելով, Նահիյէ Մէճլիսի անուն նոր ժողով մ'ալ հաստատուեր է հայ, բողոքական, կաթոլիկ և առհիկ երեւելիներէն 10ի չափ անձանցմէ, պաշտօն և ձեռն. հաստութիւն ունենալով Ունիոյ և շրջակայ գիւղորէից մանր մուրդործերը տնօրինել, մինչև 130 զչի գատերը տեսնել, վէճերը լուծել և 24 ժամ բան- տարկութեան արժանի յանցանք- ներն միայն դատել ու վճարել:

Զօրանոցը հիմնարկուեր է բանակատեղւոյն մօտ, սրու մէջ պիտի բլլայ նաև կառավարու- թեան խօնախը, Նախորդ օտտի- կաններն հանուելով պաշտօնէ, ըստ ընտրութեան ազգային ե- բեւելեաց, Տէրութեան ու Ազ- գին հաւատարիմ ու գործունե- եայ 25ի չափ անձինք օտտիկան ընտրուեր են:

Մկրտիչ կաթողիկոսն շատ

(*) Իւր Հիմնական Կանոնա- գրին հրատարակութիւնն ալ ուրիշ առթիւն Մ. Խ.

աշխատեր է թէպէտ զօրանոցի շինութիւնը ետ ձգել տալու, և ջանացեր է համազօր թէ զօ- բայ Ունիոյ մասնելը՝ տեղւոյն ժողովրդեան անգործութեանը փնտրակար կըլլայ, իսկ չէ յա- ջողեր յետի բլլալ, զի սլէհ. Սուլթանին հրամանն այսպէս է՝ պատասխաներ են:

Ունիոյ նախկին 24 000 զչի տարեկան տուրքը՝ մուգաթայի սրոչեալ տարեկան տուրքի մը կապելու շատ աշխատուեր է, բայց ի զուր, նորէն կալուած- ծական հաստութից քննութիւնը սրոչուեր է ըստ այնմ'որ տուր- քի գումարն սրոչելու համար:

Հայ Գալմազամ մ'ալ զնե- լու ջանք եղեր է, բայց չէ յա- ջողեր, ուստի և Մկրտիչ կա- թողիկոս ինչոքեր է որ գոնէ հայ օգնական մը տրուի կառա- վարչին, որոյ համար ֆինչը Բ. Դրան կամքը հարցուցեր են, կաթողիկոսն առաջարկեր է նաև որ Մէճարիֆի օրինաց հա- մեմատ արոց մէկ մասը Ունիոյ հաստակաց կրթութեանը յատ- կացուի, քննիչք ալ խոստացեր են Ազգ. վարժարանաց համար հայերէնի և տաճկերէնի երկու դաստուռ բերել տալ 1000 զչ- ամսականա՝ տէրութեան կող- մէն վճարուելու պայմանաւ:

Չիկոսմադի մեր թղթակցէն այս առաւօտ մեզ հասած նա- մակէ մը կ'տեղեկանամք թէ՝ կրդ. զօրաբանակի Միւշիթ Տէր- վիշ բաշա, Տէրսիմի Բրդերը զսպելու պաշտօնով, երջնկայէն խարբերդ հասեր է:

—Զրոյց կայ թէ Մշոյ կող- մերը 4000ի չափ տաճիկ գաղ- թական ընտանիք բնակեցնելու մտադիր է եղեր Բ. Դուռը, Այս մասին մեր ազգ. իշխանութեան կողմէն դեպքանական միջնոր- դութիւն խնդրուած բլլալը կի- մանամք Դրան այդ գիտաւո- ռութիւնը յետաձգելու համար:

—Ս. Պատարիարքը Արժ. Մը- կրեան Տ. Հայրը, Մ. Զեբուզ էֆ. ի հետ գչ. օր Սըր Լէյար- տի զրկեր է, աղգային կարեւոր ինչ ինչ խնդրոց համար:

—Կիւմուչեան Յովհ. էֆ. Կա- ըին զրկեր է Արաշկերտի և Պա- յազխի հայ գաղթականաց համար իրեն յանձնուած 100 ոսկւոյ գումարը, զայդ նոյն գաղթականաց մէջ բաժնելու համար, ըստ որոշման Տնտեսա- կան խորհրդոյ:

—Մասիս մեղադրած էր զվարչութիւնը որ Հալէպի աղ- զայնոց կողմէն ամբաստանու- թեան տակ գտնուող կէօմիլըք- ճեան Արժ. Մովսէս վարդապե- տը Ղարահիսարի Առաջն. Տե- ղապահ կարգեր է, իսկ կրո- տուգ ու թէ յիշեալ վարդապե-

տին դէմ Հալէպի աղգայնոց կողմէն ունէ բողոքոյ կամ ամ- բաստանութեան դիր եկած չէ, մանաւանդ թէ Նուրեան էֆ. ի ծանուցեալ նամակը՝ սեէ առ- բաստանութեանէ ազատ կ'կացը- նէր յիշեալ վարդապետը:

Ինչքան բեղմնաւոր է Մա- սիսի և Մասիսեանց խելադա- տակը, ուղած անձեռնուն վրայ իսկոյն անխղճօրէն ամբաստա- նութեան մուր մը ժայթքելու...

ԳՐԱՄԱԿԱՆ

Table with 2 columns: Title and Price. Includes 'Այս առաւօտ բացուեցաւ 12.32', 'Բումէլի 46.25', 'Թղթադրամ 1290 00', 'Պղինձ 178.00'

Թերթերինս մինչև մամուլը գրուած վարկերին՝ ունէ քա- ղաքական հեռագիր չկայ հա- սած դեռ:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐՆԻ

Վեհ. Սուլթանը, որ անց- եալները գերմ. դեսպան հաց- ֆէլտ կոմսին Մէճարիֆի Ա. կար- զի պատուանշանը սուած էր, այս անգամ ալ Օսմանիէի Ա. կարգի ականակուռ շքանշանը շնորհեր է:

—Մտթէն երէկ կ'ծանուցա- նէր թէ թնդանօթածիգ սպայք էրէնքէյի և Պոսթանճը-պաշը -Բէօրբուսիյի մէջ տեղը, Պաշը -պէօրիք անուն գիւղին մօտ նոր շինուելիք վառօդարանի մը հիմնարկութեան տեղը կորոչեն, և կ'յուսելու դիտել տալ թէ՝ այդ տեղը շատ մօտ լինելով անտառներուն, զորս խաշնա- րածք ամեն տարի կ'բռնկեցնեն, օր մ'ալ այսպիսի մէկ հրդեհի մ'ատեն այդ վառօդարանն ալ կ'պայթի, գիւղն ալ միտանղ օղը հանելով:

—Պետ. խորհուրդը Յտար- ուան մենաշնորհի արտօնութիւն մը տուեր է եւրոպացի ընկե- րութեան մը, Պոլսոյ և շրջակայ գիւղորէից փողոցները երկկող- բական լուսով գիշերները լու- սաւորելու համար, առ այդ պէտք եղած նիւթերն ու գոր- ծիքները առանց մաքսատուրքի հոս կարենալ բերելու պայմա- նաւ:

—Կարեւոր ինչ ինչ խընդ- րոց վրայօք խորհրդակցելու համար գչ. երկկոյ պաշտօնեայք կայս. պարսան երթալով գիշե- լուան մինչև ժամը 5ը ժողովքի նստելէն յետոյ, երէկ առաւօտ ժամը 2ին գարձեալ պարտքը գումարուելով մինչև երեկոյ տեւեր է նիստերին:

—Գաղղ. դեսպան Պ. Յուր- նիէ յառաջիկայ շք. երեկոյ օ- տար դեսպանաց և Բ. Դրան նախարարաց կոչուեք մը պիտի տայ եղեր:

—Լօպանօֆ իշխանը այն կիր. առաւօտ իրեն յատուկ շքեշարժ մակուկովը Արնաուտ քէօյ Գարաթօտօրի բաշայի ա- պարանքն երթալով, երկար տե- սակցութիւն մ'ունեցեր է:

—Եանեացիք շնորհակալու- թեան ուղերձ մը զրկեր են Անդրիոյ մէջ կաղմուած հելլե- նասիրաց մասնախմբին:

—Թայմզ լրագիրը, Հօպարթ բաշայի հրատարակած նամակին վրայ գիտողութիւն ընելուն առ- թիւը կըսէ թէ՝ օսմ. արդի նա- խարարութեան մէջ գործունե- եայ և բանիրուն պոշտօնեայ խայրէտարին և Գարաթօտօրի բաշաներն կան միայն:

—Պողպատեայ թնդանօթաց գաղի գործարանապետ հոշա- կաւորն Պ. Գրուր, իւր գործա- լանէն վերջին անգամ ելած թնդանօթիւրուն կատարուելիք մէկ փորձին ներկայ գտնուելու հրաւիրած բլլալով բոլոր մեծ տէրութեանց պատերազմի պաշ- տօնեայներն և թնդանօթարանի վերատեսուչներն, նմանօրինակ հրաւիրագրեր ալ զրկուեր են Ղազի Օսման բաշայի և թնդա- նօթարանի վերատեսուչ Ալի Սաֆի բաշայի. իսկ ասոնք չը կարենալով երթալ, իրենց տեղ մէկ մէկ ներկայացուցիչ պիտի զրկեն:

—Ռուսիոյ Նիհիլիսթներն գրամատեարց ալ սկսեր են ահ ու սարսափ ազդել, Անցեալներ- ը Ս. Բէթէրսպուրկի հարուստ վաճառականներէն մին Պ. Էլի- գիէֆ, յեղափոխական Մասնա- խմբէն գիր մը կընդունի, որ կ'հրաւիրէր զինքն անմիջապէս 30-000 քարպօս վճարել, յեղա- փոխական գաղափարաց տա- րածման նպատակու համար: Պ. Էլիգիէֆ կ'թուի թէ իրօք վճարեր է այդ գումարը իրեն ներկայացող երկու անձանօթ- անձանց, որք կանօնաւոր ստա- ցաղիք մ'ունենալով ձեռքեր- նին, այդ ստակը պահանջելու գացեր են, ֆանի մ'օր վերջը նմանօրինակ երկու գէպք ալ պատահեր է: Բօքօրէֆի գոր- ծատուեր օտիպուեր է միևնոյն հրաւերով 15-000 լուպի վճա- րել, և Մօսքուայի Եաքօվիէֆի գործատուներն ալ 20-000 լուպի Այդ հրաւիրագրոց մէջ մահ- ուան սպառնալիք ալ կան եղեր մտիկ չընողներուն դէմ, ուստի և յեղափոխական Մասնախմբին պատճառած սարսափն ու սոս- կումը այն աստիճանի հասեր է՝ որ մարդ չհամարձակիր եղեր դէմ գնելու:

—Յանձնաժողով մը կազ- մուած է սրոչելու համար թէ թղթադրամի ժամանակէն ան- հատ մարդոց մէջտեղ մնացած պարտքերն ինչ հաշուով հատու- ցուելու են, և կրտուի թէ յանձ- նաժողովոյ կարծիքն այն է որ 4 1/2 հարիւրոց թղթադրամը մէկ ոսկի հաշուուի:

—Պար սուա կ'հանէ երէկ իւր նախորդ օրը տուած այն լուրը, որպէս թէ Սուլթանն իր անձնական զանձէն 40 ոսկի խոյրէտտին բաշտի ընտանեացը, և 30 ոսկի Գարաթօտօրի բաշտի ընտանեացը ամսական թուշակ մը յատկացուցած ըլլայ:

—Քանի մ'օրէ ի վեր Պարսկաց տէրութեան սակի, արծաթ և պղինձ դրամներ հոս շրջաբերութեան մէջ կ'գտնուին, որոյ մէջ հրեայ Արեգական և Ասիական պատկերը կայ, միս երեսնայ յօտէն շարքէտտին Գաճար գրուած, մինակ ոսկի դրամին վրայ, Արևին ու Ասիական տեղ՝ Շահին պատկերը գրուած է:

—Օտէսայէն կ'ծանուցանեն թէ գործը 30 մէթրօ երկայնութեամբ ընդերկրեայ ճանքայ մը բանալով Գիրսօնի Գանձատունը կ'մտնեն և 1/2 մէթրօն քարպօնի դուռը մը կը յայտնակեն:

—Բարիցի օսմ. դեպքին Սաֆիլթ բաշա ամօնս 4/16ին Բարիցի խուլ ու մուկ տղայոց վարժարանը սյցելութիւն մը տալով մեծ պատուով կընդունուի, և ուսուցմանց եղանակներուն ու միջոցներուն բացատրութիւնը լսելով դահուսակութիւն կ'յայտնէ, և ամեն յարկերն միառմի աչքէ անցնելէն յետոյ շնորհակալութեամբ կը մեկնի:

—Ռուսիոյ կայսեր եղբայր Կոստանդին մեծ դուքսը յետ 8ին Պաթուճ գացեր է: Սոյն այցելութեան պատճառը Պաթուճ մի նաւահանգիստը մեծցնելու և նաւարան ու աւազաններ շինել տալու համար կեցած զիտաւորութեանը կ'վերջնապէս իր հաւատեն թէ շահաւորանի կառավարիչ Բոյրպիլի զարպեաք մօտերս պաշտօնէն հրաժարելով սորա տեղ թօթլէպէն զօրապետը պիտի անցնի, և Սքօպէլէֆ զօրապետն ալ իրրև Օտէսայի կառավարիչ՝ իրեն պիտի յաջորդէ:

—Կ'յիշեն թերևս ընթերցողք թէ Գաղղիոյ երեսփոխաններէն Պ. Բօլ տը Գասանեաք, կառավարութիւնը անարգած ըլլալուն համար խորհրդարանին մէջ, պարտաւանաց քուէի և եւսօրեայ արտօքսման դատաւարտուեցաւ:

Ս. յս առթիւ խորհրդարանին նախագահ Պ. Կամպէթթայի թերթը հետեւեալը կ'գրէ: «Պ. տը Գասանեաք, իրեն դէմարտօքսման պատիժն արտասանուելէն յետոյ, սա խօսքերն քսած ըլլալով ընտանութեան վարութիւն մ'էք գուք», երեսփոխանաց շատը կ'արձեար էին թէ Պ. տը Գասանեաք իր այդ խօսքովը՝ հասարակային իրաւանց դէմ ոճիր մը գործած էր և թէ իրեն նկատմամբ գործործադրութեան պիտի դրուէր:

Ատենական կոնսնագրութեան 12907 յօդուածը, որ կըսէ թէ՝ «Երբ օրէնսդրական պալատան շրջապատին մէջ յանցանքներ գործուի երեսփոխանի մը կողմէն, սեէ վիճարանութիւն կ'գաղթի, նախագահն անմիջապէս խորհրդարանին կ'ծանուցանէ: Երեսփոխանը կ'նայ բացատրութեան համար խօսիլ թէ խօսք ուղէ, նախագահին հրամանին վրայ պարտաւոր է նիստերու սրահէն դուրս ելնել, և թէ զի մօզրէ կամ ժխոր յարուցանէ երեսփոխանը, իսկոյն նիստը կը վակէ նախագահը, իրտնը իմաց կ'տայ ընդհ. դատախազին թէ երեսփոխանաց խորհրդարանին պալատան մէջ յանցանք մը գործուած է:»

Դիւանը ճանչց թէ օրէնսդրական պալատան շրջապատը բառերը չէին պատկանէր նիստերու սրահին, և թէ իր պաշտօնը կատարելէն առժամանակեայ զրկեալ երեսփոխան մը իւր խորհրդարանական անբաժանարարելութեան իրաւունքէն ալ զրկուած չէր:

Հարկ է յաւելոյն նաև թէ պարտաւանաց քուէարկութենէն ետք Պ. տը Գասանեաքի արտասանած խօսքերը անցած չեն «Պաշտօնական օրաթերթին հրատարակած ատենագրութեանը մէջ:»

—Անցեալ օր բեանակիր մը կ'անակը մեծ սնտուկ մ'առած Բանկաթիւն անցնելու ատեն,

տան մ'առաջը հասնելով սընձ տուիք վար կ'դնէ և մօտը գրտնուող դաղթական քանի մը հոգի կըսէ որ սնտուկը պահպանեն, մինչև որ ինքը բան մը մոռցած ըլլալով երթայ զայն առնէ գայր Բեանակիրը կերթայ ու մէկ մնայ չգտնար, որոյ վրայ գաղթականը կասկածի երթալով կ'խնայեն ռատիկանութեան, որ երբ սնտուկը կ'գայ կ'բանայ, մէջը դեռ նոր խեղդամահ եղող տաճիկ տղայ մը գրուած կը տեսնէ, զոր խեղդելու համար գործածուած դօտին ալ տակաւին վզին վրայ կ'կենայ եղբոր Չարագործը դեռ կ'ընտուրի:



ԱԶԻ

Կ'ծանուցանեմք Արգոյ հասարակութեան որ վերոյ նշանակեալ նշանները բոլոր ճաճկաստանի համար ինձ առանձնաշնորհեայ ըլլալով, թուականէս մինչև 13 օր վերջը սոյն նշանով կարժարներ բերողին և վաճառողին դէմ, ըստ արտաճաղրութեան օրինաց՝ պիտի բողոքեմ:

Ս. Մանգեան

Շէրիֆ-Բաշա խան թի 6
13/25 յունիս 1879

Նակին հետեւելու է, — և ստուգիւ շատ տարօրինակ և զարմանալի բան էր, սեռնել ու լսել այդ պարզամիտ աղջիկը որ բոլորով սրտիւ զբօսանաց վարդապետութիւնը և փայլուն ու շքեղ զուարճութիւնք կ'ըբարողէր:

Իսկ կասթօնի ականջն անգամ չէին մտներ այդ զուարճութիւններն, զորս առանց ճանչելու և գիտնալու կ'արհամարհէր: Սա սիղիւ և բարձր բնուորութիւն մը ունէր: ամբողջ և խաժամուծի թշնամի իւր ժուժկալ քաղցրութիւնը հաճոյք կ'ըգայր աւելի առանձնակի ուրախութիւններէ. ուստի և իւր քրոջ իղձը շահակնալ կ'երեւէր:

Այն ատեն Սէնթ փոխեց ընթացքը:

Կասթօն շատ անգամ կ'անտէր զանի մտախոհ և և արտում:

—Չեմ գիտեր, կ'պատահանէր Սէնթ՝ նորա հարցմանցը, — ամեն օր կ'լսեմ որ պարսկահոգէս, թատրոն նուագահանդէս կըսեն . . . Ես պարսկահոգէս ինչ է՝ չեմ տեսեր, չեմ գիտեր, կասթօն . . . Թատրոնի մը դրնէն ներս չեմ մտած . . . Ինչ գեղեցիկ բան ըլլալու է արդեօք, եղբայր . . .

—Շատ գեղեցիկ է, պատասխանեց կասթօն, — բայց սա կայ որ, քոյր իմ, մենք ստակ չունինք, ազգաս ենք:

Սէնթի երեսը շառագունեցաւ, նա ընաւ այս խօսքը մտքէն իսկ չէր անցուցած:

—Ասանկ բաներու համար շատ ստակ պէտք է, յարեց կասթօն ժպտելով, — իսկ մենք այլ ևս ոչ երկիր ունինք, ոչ գլխակ և ոչ տուն, հասկցար քոյրս: Խեղճ Սէնթին խօսքն սպառած էր: Նա այս անբան բաններէր, փաստհեղով իւր եղբորը գործարարութեանը վրայ, թէ այս կերպով կ'յաջողի զանի առանձն:

Նուած, որք աղմկալից և կոշտ հաճոյց մէջ իրենց ամուլ աշխատութեանը փոխարինական վարճարութիւն մը կ'որոնէին . . . և իւր հրեշտակային պարկիշտութիւնը ծանակող շարամիտ կամ անդգամ ընկերաց ծաղրէն ալ վախնալու չափ ինկած ու ստորնացած, Աստուած իմ . . .

Կասթօնի ճակատն այս միջոցին կ'կնճասէր: Յուրաքանչեւ թեմաք մը կ'անդմուէր սիրտը, յետոյ խորհուրդ մը կ'անցնէր կայծակի պէս՝ մտքին մէջէն և սյուներուն գեղնութեանը վրայէն աղօտ կարմրութիւն մը կ'սահէր:

Աչքերն ի վայր կ'խնարհեցնէր պահելու համար այն սպառնական և անզուսպ հօրքը, որոյ իր բիրերէն գուրս ցայտելը կ'ըգայր հակառակ իրեն:

—Բայց այն մարդն է . . . ան է մինակ . . . կըսէր ինքն իրեն. — նա է որ յուսահատութիւնը իրրէ վերջին բարձ ատու մեր օրհասական հօրք գլխուն տակ . . . նա է որ իմ սուրբ և անբիծ մօրս վերջին ժամը թունաւորեց . . . նա է որ մեզ ամենքիս ալ ձեռքն անցուց, և հարկադրեց զմեզ քոյ մը ձգել Մայլըրէի անուանը վրայ, որպէս զի չպղծուի և շատարգուր նա մեր սղեակիցը և թշուառութեանը մէջ . . . Աստուած իմ . . . ես գեռահաս պիտի մեռնիմ, բայց . . . ո՛հ մեղայ, մեղայ . . . բայց նա չպիտի խնդար մահուան շարն իմանալուն . . .

Իսկ Սէնթ, խեղճ աղջիկը, չէր գիտեր թէ ինչ բարկութեան և ատելութեան փոթորիկ մը այս միջոցին վեր ի վայր կ'յուզէր իւր եղբօրն առնելով սիրտը. — այլ կ'տեսնէր մինակ որ նորա դիւրաշարժ քունքերը կը զարնէին ու կ'քրտնէին . . . կ'անտէր մինակ որ նորա կ'նճասեալ ճակատը մերթ կ'շառագունէր և ապա կը գեղնէր . . .

LOTTERIE.

Մ Ե Ծ Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն
ՉՐԴ ՍԷՐԻ

Համալուրի Գերմանական կառավարութիւնը, որ սոյն նոր գրամական մեծ վիճակահանութիւնը վաւերացուցած է, ոչ մի այն բաժնետոմսերուն ցրտիլը, սյուե ամեն քաջուած վիճակահանութիւնը կ'հակակոչուէ. Պարգևներուն ճշգիւ վճարմանը համար Գանձուն բոլոր արժէտոմսերովը երաշխաւորելով, այնպէս որ իւրաքանչիւրին ամեն կողմանէ ամենամեծ ապահովութիւն տրուած է:

Արդէն այս պարագայն բաւական ազատաց մեծ թէ սոյն վիճակահանութիւնն ամեն ապահովութիւնն ունի. Սոյն նոր մեծ վիճակահանութիւնն այժմ մինակ 82.000 տոմսակէ կ'բաղկանայ, յորոյ 40.000ը անպատճառ պիտի շահին, որմէ բացառաւ կերպի սոյն ձեռնարկութեան շահաւետութիւնը, վասնզի տոմսակաց գրեթէ կէսը վաստկող պիտի ըլլան. Բոլոր պարգևները արագաբար մէկմէկու յաջորդող միայն 6 Բաժանմամբ պիտի քաջուին. Առաջին մեծ Պարգևը պիտի ըլլայ

533,000 Ֆրանկ

Իսկ երկրորդական Պարգևներն են՝ զխաւորաբար					
Տոմսակ	Ֆրանք էն	Ֆրանք էն	Տոմսակ	Ֆրանք էն	Ֆրանք էն
1	333.333	» 333.333	5	40.666	» 53.330
1	260.000	» 200.000	1	8.000	» 8.000
1	133.333	» 133.333	54	6.666	» 359.964
1	80.000	» 80.000	5	5.333	» 26.665
1	66.666	» 66.666	70	4.000	» 280.000
2	53.333	» 106.666	216	2.666	» 575.856
2	40.000	» 80.000	2	2.000	» 4.000
5	33.333	» 166.665	2	1.600	» 3.200
2	26.666	» 53.332	531	1.333	» 707.823
12	20.000	» 240.000	670	666	» 446.220
24	13.333	» 319.992	945	400	» 378.000

և ըն. և ըն.
Համագումար՝ շահող բաժինք 40.000 Պարգև.
Ամեն մէկ վիճակահանութեան իսկ և իսկ ետքը, գերմանական կառավարութեան հսկողութեան ներքեւ, բոլոր շահող բաժիններուն Պարգևները անմիջապէս Ոսկեգրամով պիտի վճարուին:

Մեք սոյն սկզբնական տոմսակներուն վաճառումն յանձն առած բլլարով, առանց վերադիր ծախուց, իրենց բուն գիներովը կ'ըրկեմք: Յառաջիկայ Չբաժանմանց վիճակահանութեանց համար պաշտօնական որոշուած գինն է

Սկզբնական 1 Տոմսակ համար **Ֆրանք 45.—**
Իսկ 5-ը Տոմսակ համար **Ֆրանք 22.50**

Տոմսակաց արժէքը պէտք է ուղարկել գաղղիական Պանքայի գրամատոմսերով. թղթատարութեան ծախքը զրկողին վերայ ըլլալով, և կամ Գաղղիոյ, Անգղիոյ կամ Գերմանիոյ Պանքաներու վրայ փոխանակագրելով:

Դրամն ընդունելնուս պէս յատուկ նամակաւ կ'ըրկեմք յանձնարարեալ Տոմսակները, որոնք աշուրթեան Զինանշանովը վաւերացեալ են. ասոնց հետ կ'ըրկեմք նաև վիճակահանութեան Յայտագրին ալ գաղղիական լեղուաւ, և ամեն վիճակարկութեան յետոյ Պարգևներուն և շահող թուոց պաշտօնական ցուցակը. բաց յայսմանէ Պարգևները պիտի հրատարակուին Արևելքի գլխաւոր լրագրաց մէջ, Ծնորհակալ ենք թուրքիոյ հաստատութեան, սոյն վիճակահանութեան առաջին Սէրիին նշակամամբ ունեցած մեծ հարգածութեան համար, և կ'խոստանամք նաև յապտող ային միևնոյն ճշգրտութեամբ կատարել իրենց յանձնարարութիւնները կողմէս, որ իրենց յանձնարարութիւնները փութով ուղարկեն, վիճակահանութեան առաջ, այսինքն՝ յառաջ քան 9 ՅՈՒՂԻՍ (քստ լատ.) առ մեր գործատունն ուղղակի ԻՉԷՆԹԱԼ ՆԻ ԸՆԿԵՐՔ, գլխաւոր գրասենեակ վիճակահանութեան ի Համալուրի (Գերմանիա)

ISENTHAL & Cie Bureau principal de Loterie.
Hambourg (Allemagne).

Մեր թղթակցութիւնը գաղղ. անգլ. և իտալերէն լեզուօք կատարուելով, կ'իսնդրեմ որ այս լեզուներէն մէկովը մեզ հետ թղթակցութիւն Նամակ մը Արևելքի քաղաքներէն մինչև Համալուրի՝ 180 Ժամէն կ'հասնի և փոխադարձաբար:

Adolf Steiner Bureau d'annonces Hambourg

<p>ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՒՄ ՎԵՆԵՏԿԱՅ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՐԳԻԼԻԱՅ ԵՆԷԱԿԱՆ, նորոգ թարգմանեալ ի Դեր. Եղ. Ուարդայ ընտիր հայկաբանութեամբ ի չափս հայկականս.</p>	<p>գին ֆրանք 4.25. ՊԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ, հատոր Ռ. սկզբեալ չորքստասներորդ դարէն կ'հասնի մեր օրերը, գրեալ աշխարհաբար լեզուաւ և կարևոր հատութեամբ. ֆրանք 5.50.</p>
--	--

Կասթօն իւր վզին շուրջը կ'ըգտար թևի մը մեղմիկ մը բոլորուիլը, և շրթանքի մը իւր տենդէն եռացող ալիքներուն վրայ քսուելով փաղաքումը:

Կասթօն վեր կ'առնէր այն ատեն իւր աչքերը, — Սէնթին աչքերն ալ նոյն պահուն արտասուքով լի էին ժպիտի մը ներքեւ . . .

Սէնթի այս ժպիտը իրրու թէ մոգական սպիղանի մ'էր, որոյ արագ արդիւնքը կ'մտնէ իսկոյն բոցակէզ վէրքի մը հրափառ տապը. — Կասթօնի սրտմտութիւնը կ'մեռանէր գգուանաց թռիչքին մէջ. — Կ'մտաւայր սա իր ատելութիւնը, այնքան իր հոգւոյն քաղցը կ'գայր իւր քրոջ սիրուն ժպիտը:

Եւ տեսնելուն պէս այս անդիմադրելի և հաճոյական սքանչացումը զոր կ'ճառագայթէր կուսական այդ ժպիտը, Կասթօն իր միտքը կ'թողէր այլուր սահելու Յոյսը, զհռահաս տարիքստներուն այն ձեռնառու բարեկամը, ի հեռուստ իրեն համար ազգային մը խորշն ու ազատ նշոյլը կ'փայլեցնէր:

Սէնթ ստուգիւ այնքան գեղեցիկ և այնքան մաքուր ու պարկեշտ էր, որ կարծես Աստուծոյ ակնարկն՝ անշուշտ՝ սիրով իւր վրայ կ'իջնէր. Երջանկութիւնը, թերևս վաղանցիկ նեղութեան ու տառապանքի մը ծայրն էր . . .

Իչձերնին այսպէս իրար խառնուելով կ'իջնէր ճեն. ճերեալ դէպ յերկինս այնպիսի անձնամոռացմամբ զոր բարեպաշտութիւն կ'անուանեն. — Սէնթ Կասթօնի համար միայն կ'աղօթէր ու կ'յուսար. Կասթօն ալ Սէնթի համար կ'աղօթէր հաւատոյ և արիւթիւնը կ'կոչէր յօգնութիւն:

Իսկ Կասթօն Սէնթին աւելի մխիթարութիւն մ'ուներ. զի օր քստ օրէ կ'տեսնէր որ կեանքը կ'զարգանայր Սէնթին վրայ, և շնորհագեղ կ'ըրոյն մը նորանոր նշան:

ներ կ'գային ընդ մանկութեան գեղասքան խոստումները. — Դեռահաս աղջիկը տակաւ առ տակաւ սկսեր էր կին ըլլալ. Յաղթանակաւ և առանց ընկճելու կ'անցնէր այն փորձանալից տարիքը, յորում կոյսը կ'շառագնի երբեմն և անձանօթ ախտի մը ճնշմանը ներքեւ կ'սոյնարհի ու կ'ընկճի:

Կասթօն գոհութեամբ կ'նշմարէր սոյն ծաղկագեղ մանկութեան հետզհետէ ըրած բարեյակող զարգացումը, որոյ կիսանուաղ սպիտակ կողոնք ամեն առաւօտ ևս քան զևս կ'բացուէր:

Երկայր օրեր կային այդ թարմ երեսին վրայ, երկայն օրեր այդ ճապուկ և առածիգ հասակին մէջ . . .

Սէնթ, ընդ հակառակին, սոսկմամբ կ'նշմարէր իւր եղբորը վրայ յամբ, անզգայի, բայց հաստատ և յարատե թօշուէթիւն մը, Կասթօն ալ գեղեցիկ էր, և աւելի ուժեղ քան թէ սկար. իսկ Սէնթի աչքերն այնպիսի խանդակաթ մօր մ'աչկունքն էին՝ որք կրնան ի հեռուստ նշմարել կարծքի հիւանդութեան ենթակայ անձանց վրայ հետզհետէ տիրապետող ու յառաջ քալող հեռաւոր մահուան մ'աննշմարելի նշանները:

Մայրերէն տիկին մարգիլուհին, Կասթօնի մայրը, կուրծքի հիւանդութեանէ մեռեր էր:

Շատ անգամ, առաւօտները, Սէնթի ժպիտին ետեւը արտօսը մը կայր, երբ սա կ'տեսնէր իւր եղբայրը գիշերային տենդէն ու հաղէն շնջապառ, որոյ սնքուն մնուէն անշարժ ու խոշոր աչացը մէջ հիւժում ու խամբութիւն մը կ'ընդշմարէր . . .

Խեղճ աղջիկը շատ աղէկ հասկցեր էր. ըսած էին իրեն թէ ձկնէն լաւագոյն դեղն ու դարմանն է՝ ըզբօսանք և զուարճութիւն:

Այն ատենէն ի վեր, Սէնթ կ'աշխատէր Կասթօնի համոզելու որ իւր տարիքն եղող երիտասարդաց օրեր: